

Հուլիսի 21-ին տեղի ունեցավ Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայի կարգապահական կոմիտեի հերթական նիստը՝ ՀՖՖ Կարգապահական կոմիտեի նախագահ Ռուբեն Սինոյանի նախագահությամբ՝

ՈՐՈՇՎԵՑ՝

16/07/11թ. «Գանձասար-95»-«Կիլիկիա-95» խաղին «Կիլիկիա-95» թիմի ֆուտբոլիստ Արթուր Պողոսյանի հեռացման (նույն խաղում 2 զգուշացում) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 4-րդ կետի համաձայն՝ որակազրկել 1 խաղով, «Կիլիկիա» ֆուտբոլային ակումբին տուգանել 3000 դրամ:

18/07/11թ. «Բանանց-2-98»-«Փյունիկ-1-98» խաղին «Բանանց-2-98» թիմի ֆուտբոլիստ Արսեն Միքայելյանի հեռացման, մրցակցին ձեռքով հարվածելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ որակազրկել 2 խաղով, «Բանանց» ֆուտբոլային ակումբին տուգանել 10000 դրամ:

18/07/11թ. «Բանանց-2-98»-«Փյունիկ-1-98» խաղին «Փյունիկ-1-98» թիմի ֆուտբոլիստ Անդրանիկ Գալստյանի հեռացման, մրցակցին ձեռքով հարվածելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ որակազրկել 2 խաղով, «Փյունիկ» ֆուտբոլային ակումբին տուգանել 10000 դրամ:

18/07/11թ. «Ադանա-98»-«Գուգարաց-98» խաղին «Գուգարաց-98» թիմի ֆուտբոլիստ Արտակ Վանյանի հեռացման, մրցակցին ձեռքով միտումնավոր հարվածելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 6-րդ կետի համաձայն՝ որակազրկել 2 խաղով, «Գուգարաց» ֆուտբոլային ակումբին տուգանել 10000 դրամ:

18/07/11թ. «Ադանա-98»-«Գուգարաց-98» խաղին «Գուգարաց-98» թիմի ֆուտբոլիստ Ալեքսանդր Անտոնյանի հեռացման, մրցավարին հայհոյելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ որակազրկել 6 խաղով, «Գուգարաց» ֆուտբոլային ակումբին տուգանել 15000 դրամ:

18/07/11թ. «Ադանա-98»-«Գուգարաց-98» խաղին «Գուգարաց-98» թիմի մարզիչ Արմեն Փիրումյանի պահվածքի (մրցավարին հայհոյելու, հրելու, սպառնալու) համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 11-րդ կետի համաձայն՝ որակազրկել 8 խաղով, «Գուգարաց» ֆուտբոլային ակումբին տուգանել 20000 դրամ:

16/07/11թ. «Աչաջուր-95»-«Փյունիկ-1-95» խաղին խախտելով մրցումների կանոնակարգի 6-րդ հոդվածի 4-րդ կետը՝ մարզադաշտը թերի նախապատրաստելու, ջուր չլինելու, հանդերձարաններում անտիսանիտարական վիճակի համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 18-րդ հոդվածի 21-րդ կետի համաձայն՝ «Աչաջուր» ֆուտբոլային ակումբին տուգանել 25000 դրամ:

16/07/11թ. «Փյունիկ-2-95»-«Իմպուլս-95» խաղի նախախաղային խորհրդակցությանը «Իմպուլս-95» թիմի ներկայացուցչի չմասնակցելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 17-րդ կետի համաձայն՝ «Էրեբունի-Դիլիջան» մարզական ակումբին տուգանել 2000 դրամ:

18/07/11թ. «Արամուս-98»-«Շիրակ-98» խաղին մարզադաշտում կարգ ու կանոն չապահովելու համար, ՀՖՖ-ի կարգապահական կանոնակարգի 19-րդ հոդվածի 10-րդ կետի համաձայն՝ Արամուսի գյուղապետարանին տուգանել 10000 դրամ: